



## ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2016 թ.

N 458-Ա

ք. Ստեփանակերտ

#### «ՇՈՒՇԻՑԻ ՏԵՆԻՆԼՈՒՌՈՒԳԻՎԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԻՋՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ է**.

1. Արցախի պետական համալսարանի բակալավիաթի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցան համակարգերի «Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն», «Տրանսպորտային ուղիների միջոցների շինարարություն, կառավարում և դրանց շահագործում», «Էլեկտրաէներգետիկա», «Վեռահաղորդակցություն», «Օգտակար հանածոների մշակում և հետախուզում» մասնագիտությունների մասնագիտական խմբերի ուսանողներին, համապատասխան պրոֆեսորադասախոսական և ուսումնասնողական կազմին տեղափոխել «Շուշի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարին՝

1) մինչև 2016 թվականի օգոստոսի 17-ը ապահովել Արցախի պետական համալսարանի բակալավիաթի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցան համակարգերի «Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն», «Տրանսպորտային ուղիների միջոցների շինարարություն, կառավարում և դրանց շահագործում», «Էլեկտրաէներգետիկա», «Վեռահաղորդակցություն», «Օգտակար հանածոների մշակում և հետախուզում» մասնագիտությունների մասնագիտական խմբերի ուսանողներին, համապատասխան պրոֆեսորադասախոսական և ուսումնասնողական կազմի՝ «Շուշի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ տեղափոխման գործընթացը:

2) մինչև 2016 թվականի հոկտեմբերի 1-ը ապահովել Արցախի պետական համալսարանի «Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն», «Տրանսպորտային ուղիների միջոցների շինարարություն, կառավարում և դրանց շահագործում», «Էլեկտրաէներգետիկա», «Վեռահաղորդակցություն», «Օգտակար հանածոների մշակում և հետախուզում» մասնագիտությունների լաբորատոր նյութատեխնիկական բազա հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով «Շուշի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամին հանձնելու աշխատանքները:



ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ